ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՏՈՒՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս, , noratus.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 8-Ա

2021թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետով , 18-րդ հոդվածի 7-րդ կետով և հիմք ընդունելով համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը.

Նորատուս համայնքի ավագանին
Որոշեց.

Հաստատել՝

1.Առաջին դասարան հաճախող յուրաքանչյուր երեխային տրամադրվող գումարի չափը՝ 10.000 /տասը հազար/ դրամ

2.Յուրաքանչյուր նորածին երեխային տրամադրվող միանվագ գումարի չափը՝ 25000 (քսանհինգ հազար) դրամ:

3.Շրջանավարտների համար միջոցառում կազմակերպելու և նվերներ գնելու համար տրամադրվող գումարի չափը մեկ շրջանավարտի հաշվով՝ մինչև 14000 /տասնչորս հազար/դրամ

4.Տարեմուտի միջոցառում կազմակերպելու և նվերներ ձեռք բերելու համար տրամադրվող գումարի չափը յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ մինչև 2000 /երկու հազար/դրամ

5.2020թ. թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմում զոհված զինծառայողների ընտանիքներին՝ գերեզմանաքարի ձեռք բերման և տեղադրման համար 800000-ական դրամ, վիրավոր զինծառայողներին՝ 150000-ական դրամ /միանվագ/ և Արցախում ծառայող ժամկետային զինծառայողներին՝ 50000-ական դրամ

6.Միայնակ կենսաթոշակառուներին տրամադրվող գումարի չափը՝ մինչև 20000 (քսան հազար)դրամ

7.Ծանր հիվանդությունների դեպքում տրամադրվող գումարի չափը՝ մինչև 50000 (հիսուն հազար) դրամ՝

8.Սոցիալապես անապահով ընտանիքներին և բուժման կարիք ունեցող բնակիչներին տրամադրվող գումարի չափը՝ մինչև 25000 (քսանհինգ հազար) դրամ

9.Տնտեսական բնույթի և այլ կարիքների անհրաժեշտության դեպքում տրամադրվող գումարի չափը՝ 30000-50000 (երեսուն հազարից մինչև հիսուն հազար) դրամ

Ավագանու անդամներ՝

Կողմ - Դեմ - Ձեռնպահ -

1. ԱԹԵՅԱՆ ԽԱԺԱԿ

2. ԱՍՈՅԱՆ ԱՇՈՏ

3. ԲԵԳՈՅԱՆ ԷԼԵՈՆՈՐԱ

4,ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

7,ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

8. ՆԱՎՈՅԱՆ ՀՐԱՆՏԻԿ

9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱ

10. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՇԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ ՍՈՒՐԱԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՏՈՒՍԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Նորատուս, , noratus.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 ՀՈՒՆՎԱՐԻ 2021թվականի N 9-Ա

,,ՆՈՐԱՏՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ,, ԵՎ ,,ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ,, ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2021թ. ՀՀ բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ

համայնքի ավագանին

որոշում է.

1.Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու ,,Նորատուս համայնքի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում,, և ,,Լուսավորության ցանցի կառուցում,, տնտեսական զարգացման ծրագրերը

2.Սուբսիդիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել ,,Նորատուս համայնքի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում,, և ,, Լուսավորության ցանցի կառուցում,, տնտեսական զարգացման ծրագրերի ֆինանսավորման հայտերը:

3.Սահմանել, որ ծրագրերի ներկայացման համար համայնքի 2021թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագրերը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:

Ավագանու անդամներ՝

Կողմ - Դեմ - Ձեռնպահ -

1. ԱԹԵՅԱՆ ԽԱԺԱԿ

2. ԱՍՈՅԱՆ ԱՇՈՏ

3. ԲԵԳՈՅԱՆ ԷԼԵՈՆՈՐԱ

4,ԵՓՐԵՄՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

5. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

7,ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

8. ՆԱՎՈՅԱՆ ՀՐԱՆՏԻԿ

9. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱ

10. ՍՏԵՓԱՆՅԱՆ ՆՇԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ ՄՈՒՐԱԴ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ